ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ «ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

Հաշվի առնելով, որ Կողմերն ընդունում են ուսանողական սպորտի զարգացմանն և մասսայականացմանն ուղղված ձգտումը

Ձգտելով զարգացնել համագործակցությունը ֆիզիկական կրթության և սպորտի բնագավառում

Կարևորելով ուսանողների սպորտային և կրթական միջոցառումներում մասնակցության ակտիվության աստիճանի բարձրացումը

Ընդունելով Կողմերի պատրաստակամությունը համատեղ կրթական, մարզական միջոցառումների իրականացման համատեքստում

Հիմք ընդունելով սույն հուշագիրը և փոխադարձ պայմանավորվածությունները

Կողմերը համաձայնեցին հետևյալի շուրջ՝

1. Համագործակցության նպատակը

Սույն հուշագրով Կողմերը նախատեսում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում համագործակցել հուշագրի 2-րդ մասով նախատեսված ուղղություններով՝ իրենց հնարավորությունների, միջոցների և փորձի կիրառմամբ:

2. Համագործակցության ուղղությունները

Սույն հուշագրով համագործակցության շրջանակներում «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամը (այսուհետ՝ Ինստիտուտ) և ՀՀ «Ուսանողական մարզական ֆեդերացիա» հասարարական կազմակերպությունը (այսուհետ՝ ՈՒՄՖ) պատրաստակամ են.

2.1 պարբերաբար միմյանց տեղեկացնել և համատեղ քննարկել ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցեր, որոնք թույլ կտան զարգացնել սպորտը և դրա տարածվածությունը ոչ միայն ուսանողության, այլև բնակչության լայն շրջանում,

2.2 փոխադարձ աջակցության ցուցաբերել մարզական, կրթամարզական միջոցառումների կազմակերպման և իրականացման համատեքստում,
2.3 ուսանողների մասնակցության ակտիվության խթանման նպատակով տեղեկատվական միջոցառումներ կազմակեպել, մասնակցության նպաստավոր պայմաններ և պահանջներ սահմանել,
2.4 ՈՒՄՖ-ն պատրաստակամ է նաև.
2.4.1. համաձայն ՀՀ «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքի Ինստիտուտին համարել ֆեդերացիայի լիիրավ անդամ, ընդունել մուտքավճարներ և անդամավճար.
2.4.2. որպես լիիրավ անդամ Ինստիտուտի պատվիրակներին ներգրավել ֆեդերացիայի կանոնադրությամբ նախատեսված ընդհանուր ժողովներին և ղեկավար մարմինների ընտրությանը.
2.4.3. աջակցության ցուցաբերել ինստիտուտի կողմից կազմակերպվող ներբուհական մարզական խաղերի և ՀՀ օրենսդրությամբ սահմանված ֆիզիկական դաստիարակության ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացքում.
2.4.4. ներգրավել Ֆեդերացիայի կողմից կազմակերպվող մարզական և կրթական միջոցառումներում Ինստիտուտի դասախոսական կազմին և ուսանողներին.
2.4.5. որպես համալսարանական սպորտի միջազգային ֆեդերացիայի (FISU) լիիրավ անդամ Ինստիտուտի ուսանողներին ներգրավել մարզական և կրթական միջազգային միջոցառումներում.
2.4.6. որպես համալսարանական սպորտի եվրոպական ասոցիացիայի (EUSA) լիիրավ անդամ ինստիտուտի ուսանողների ներգրավում մարզական և կրթական եվրոպական մաշտաբի միջոցառումներում:

2.5. Ինստիտուտը պատրաստակամ է նաև.

2.5.1. համաձայն ՀՀ «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքի համարվել ՈՒՄՖ լիիրավ անդամ վճարել մուտքավճարներ և անդամավճար.
2.5.2. որպես լիիրավ անդամ իր պատվիրակներին ներկայացնել Ֆեդերացիայի կանոնադրությամբ նախատեսված ընդհանուր ժողովներին և ղեկավար մարմինների ընտրությանը.
2.5.3. Ֆեդերացիայի կողմից կազմակերպվող մարզական և կրթական միջոցառումներում ներկայացնել ինստիտուտի դասախոսական կազմի անդամներին և ուսանողներին.
2.5.4. հավուր պատշաճի կազմակերպել ներբուհական մարզական խաղեր և ՀՀ օրենսդրությամբ սահմանված ֆիզիկական դաստիարակության ուսումնական գործընթաց.
2.5.5. հնարավորության դեպքում ապահովել իր ուսանողների մասնակցությունը համալսարանական սպորտի միջազգային ֆեդերացիայի (FISU) մարզական և կրթական միջազգային միջոցառումներում.
2.5.6. հնարավորության դեպքում ապահովել իր ուսանողների մասնակցությունը համալսարանական սպորտի եվրոպական ասոցիացիայի (EUSA) մարզական և կրթական եվրոպական մաշտաբի միջոցառումներում:

3" Համագործակցության սկզբունքները

Կողմերը սույն հուշագրի սահմաններում իրենց գործառույթներն իրականացնում են օրինականության, փոխօգնության, փոխադարձ հարգանքի և վստահության, համագործակցության սկզբունքներով:

4. Եզրափակիչ դրութեր

4.1 սույն հուշագիրը կնքվում է երկու օրինակից հայերեն լեզվով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:
4.2 սույն հուշագրի լրացումներն ու փոփոխությունները համարվում են հուշագրի անբաժանելի մասը:
4.3 սույն հուշագիրը չի առաջացնում ֆինանսական պարտավորություններ Կողմերի համար: Սույն հուշագիրը մտադրությունների մասին համաձայնություն է, ինչը պարունակում և հաստատում է Կողմերի համագործակցելու ցանկությունը և պատրաստակամությունը: Միաժամանակ Կողմերը ընկալում և հաստատում են, որ սույն հուշագրի դրույթները չունեն Կողմերի համար պարտադիր իրավաբանական ուժ:
4.4 յուրաքանչյուր կողմ կարող է միակողմանիորեն խզել հուշագիրը՝ այդ մասին մեկ ամիս առաջ տեղյակ պահելով մյուս կողմին:
4.5 սույն հուշագիրը կնքվել է Երևան քաղաքում, 2021թ. Մարտի 25–ին:
4.6 սույն հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում անժամկետ:

5. Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

Ինստիտուտ	**ՈՒՄՖ**
«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ	ՀՀ «Ուսանողական մարզական ֆեդերացիա» ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Ալեք Մանուկյան 11	ՀՀ, ք" Երևան, Ծարավ Աղբյուրի 55/11, 35
Ռեկտոր՝ Դավիթ Խիթարյան	Նախագահ՝ Հովհաննես Գաբրիելյան
ստորագրություն, Կ.Տ.	ստորագրություն, Կ.Տ.